

N E-009.2020
Երևան, 5 մայիսի, 2020թ.

ՀՀ Շիրակի մարզպետ
պարոն Տիգրան Պետրոսյանին

Հարգելի պարոն Պետրոսյան,

Ուրախությամբ տեղեկացնում ենք, որ «Երաժշտություն հանուն ապագայի» մշակութային հիմնադրամը հայտարարում է «Երաժշտություն հանուն ապագայի» տարեկան անվանական կրթաթոշակի մասին:

Հիմնադրամի նպատակն է բացահայտել մշակույթի և արվեստի տաղանդավոր ներկայացուցիչներին, նպաստել նրանց հեռանկարային աջակցմանը, ինչպես նաև իրանել հայկական մշակույթի, դասական երաժշտության կատարողական արվեստի զարգացումն ու տարածումը հասարակության մեջ:

Կրթաթոշակը նախատեսված է 10-16 տարեկան հայ տաղանդավոր երիտասարդների համար հետևյալ մասնագիտություններով՝ ջութակ, պլո, թավջութակ, ֆլեյտա, հորոյ, ֆագոտ, գալարափող, շեփոր, տրոմբոն, հարվածային գործիքներ, դաշնամուր և տավիղ:

Միջազգային ժյուրիի կողմից ընտրված 10 լավագույնները կստանան դրամական իրախուսում, աշխարհահռչակ երաժիշտների վարպետության դասերին անվճար մասնակցելու հնարավորություն, այդ թվում՝ առցանց, Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի հայաստանյան համերգներին և փորձերին անվճար ներկա գտնվելու հնարավորություն:

Ծրագրի երաժշտական ղեկավարն է Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր Սերգեյ Սմբատյանը:

Դիմելու վերջնաժամկետն է **ա.թ. մայիսի 22-ը**: Կրթաթոշակին դիմելու մանրամասները ներկայացված են հիմնադրամի www.m4f.foundation կայքէջում:

Խնդրում ենք կրթաթոշակի մասին տեղյակ պահել Ձեր մարզի բոլոր երաժշտական, արվեստի դպրոցներին, քոլեջներին, և տեղեկացնել մեզ նրանց իրազեկված լինելու մասին:

Ձեր աջակցությունը մեծ ներդրում կլինի տաղանդավոր երիտասարդների բացահայտման և ծրագրի բարեհաջող իրականացման գործում:

Համագործակցության ակնկալիքով և հարգանքով՝



Աննա Տեր-Հովակիմյան
Տնօրեն

Կատարող՝ Լիդա Արշակյան (+374 95 032 472)



«Երաժշտություն հանուն ապագայի» մշակութային հիմնադրամ
Հայաստան, ք. Երևան, 0002, Մոսկովյան 31, գրասենյակ 166
info@m4f.foundation
www.m4f.foundation
հեռ.՝ +374 (0) 11 232 113

ՀՎՀՀ՝ 02648883
«Ամերիարբանկ» ՓԲԸ
1570060713590100 AMD
1570060713590146 EUR
1570060713590101 USD